

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մէճ.
Պաւառաց 2 Լիրա
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 Մէճ.
Պաւառաց 1 Լիրա
Օտար երկիրներու 50 Ֆր.
Մանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ երկու անգամի հա-
մար 2 զուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրա գնացած լրագրաց ճանրու
ծարքը Խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն չարագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի : Գալա-
թիա Սանտրքըլար շատուկ թիւ
498, Նօրո խան, Մանիքի գրասեն
եակը :
Համար ժամը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չուրուշ նամակ, յորում, և
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱՆԳՆԻՊՈԼԻՍ 3 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Լորտ Սալիպըրի երկրորդ բանա-
խօսութիւն մըրաւ, որ Միտլէքսի
պահպանողական ընկերութեան կո-
չունքին մէջ խօսածէն նուազ կարեւ-
որ չէ : Լորտերուն խորհրդարանին
մայիս 6ի նստին մէջ Լորտ Կրանվիլի
պատասխանելով Պէրլինի դաշնագը-
րին դործադրութեան համար ձեռք
առնուած միջոցները նշանակեց, որք
են՝ Պոլսոյ իշխանին ընտրութիւն-
նը՝ զոր տէրութիւնը ընդունեցին. Պոլ-
սոյ զարկոյ սահմանադրութեան հաստա-
տութիւնը, և այս իշխանութեան սահ-
մանն որոշելու պաշտօն ունեցող յանձ-
նախորհրդին դործի սկսիլը. Դանուբի
բերդերուն քակտումը տակաւին մեծ
յառաջադիմութիւն ըրած չէ, բայց
այս խնդիրն ալ տէրութեանց ուշադ-
րութիւնը գրաւած է. Արեւելեան
Բումբէլի սահմանները կը դժուին.
Ալեքս. փաշան տէրութեանց հաւա-
նութեամբ ընդհանուր կառավարիչ
անուանեցաւ իշխելու նահանգին.
Պէրլինի դաշնագրին 22րդ. յօդուա-
ծին համեմատ, Ռուսիոյ դորքը մա-
յիս 3ին մեկնիլ պիտի սկսի, և մին-
չև օգոստոս 3՝ Պոլսոյ և Արե-
ւելեան Բումբէլի Ռուսաց զօրքէն պի-
տի պարպուին, այնպէս որ այս վեր-
ջին երկու նահանգաց մէջ ալ Ռու-
սական զօրք չպիտի մնայ : Ռուսք
արդէն մեկնիլ սկսած են : Կիրիտի
սահմանադրութեան վերաբնութիւ-
նը, որ խիստ ազատական կերպիւ
էր, լեռնային գաւառաց մէջ խռո-
վութեանց առիթ եղած էր. բայց
հոն ալ խաղաղութիւնը վերահաս-
տատուած է : Մինչև հիմայ տակաւին
Ժամանակ չեղաւ Եւրոպական թուր-
քիոյ ուրիշ գաւառաց համար համա-
նըման կանոնադրութիւններ հաստա-
տելու :

Գաղղիա, Պէրլինի դաշնագրին
24րդ. յօդուածին համեմատ, Հել-
լենական խնդրոյն նկատմամբ միջնոր-
դութեան առաջարկութիւնները ըրած
է, զորս տէրութիւնը ընդունած են :
Հէրսէքի, Պոսնիոյ և Նովի—Պազարի
խնդիրը կարգի գրուեցաւ : Գարա-
տաղի խոստացեալ հողային ընդար-
ձակութիւնը տրուեցաւ : Սերվիոյ
ինքնիշխանութիւնը ճանչուեցաւ, և
Լորտ Սալիպըրի կը յուսայ որ Ռու-
սանիա կրօնական անխորութեան նը-
կատմամբ ապահովութիւններ կու-
տայ, այսինքն Հրէից հաւասարու-
թիւնը կընդունի, և այն ատեն Ռու-
սանիոյ անկախութիւնը ևս կը ճան-
չուի : Ասիոյ մէջ դաշնագրութեան
համեմատ սահմանն որոշուած է, և
Պնդիոյ ու Ռուսիոյ միջև հաստատ-
եալ համաձայնութեան համեմատ հա-

րաւային կողմի սահմանն ալ անգղիա-
կան յանձնախմբի մը դործադրութեամբ
պիտի որոշուի :

Ասիոյ մէջ կատարուելիք բարե-
նորոգմանց համար յանձնախմբի մը
զրկուած է, կըսէ Լորտ Սալիպըրի,
տեղական պիտոյքը քննելու. բայց ի-
րօք՝ այդ յանձնախմբէն՝ այսինքն Հա-
յաստան գնացող Քոմիսներէն մեծ
արդիւնք չկրնար սպասուիլ, քանի
որ դրան երկտական վիճակը բարե-
քած չէ. այսու ամենայնիւ Սնդիկա
տեղեկութիւնն մ'առած չէ թէ այս
պայմանին նկատմամբ դաշնագրին հա-
կառակ վարուելու դիտարկութիւն
մը կայ : Միթէ դաշնագրին այս պայ-
մանին դործադրութեան համար Սնդ-
ղիա տեղեկութիւնն առած է. այս ալ
տարակուսելի է :

Նօս. լրագրին յիշել կուտայ թէ
Լորտ Սալիպըրիի նշանակած պայ-
մանը դաշնագրին 61րդ. յօդուածն
է, որ հետեւեալն է. « Բ. Դուռն յան-
« ձըն կառնու. Հայոց բնակեալ դա-
« ւառաց մէջ տեղական պիտոյքի պա-
« հանջած բարեօրոգմանն ու բարե-
« նորոգումներն ապաւորուած դործադրել,
« և Հայոց ապահովութիւնն երաշխա-
« ւորել Զէքէքներուն և Բիւրդերուն
« դէմ : Բ. Դուռն պարբերական կեր-
« պիւ տեղեկութիւն պիտի տայ տէ-
« րութեանց՝ այս նպատակաւ ձեռք
« առնուած միջոցներուն վրայ, և տէ-
« րութիւնը անոնց դործադրութեան
« վրայ պիտի հսկեն » :

Նօս. լրագրը կը յարէ թէ այս
յօդուածը մինչև այսօր չէ դործադ-
րուած. թէ Միտհաթ փաշային Սու-
րիոյ ընդհանուր կառավարիչ անուա-
նելուն վրայ գրուած յայտը չըկա-
տարեցան. թէ Լորտ Սալիպըրիի
խօսքին նայելով 61րդ. յօդուածն եր-
կար Ժամանակ պարզապէս վերացա-
կան պիտի մնայ, թէ և բնագիրն «ան-
յապաղ» բառը կը պարունակէ, և այս
ալիպիսի ստիպողականութիւն մ'ու-
նի, որ դաշնագրին ուրիշ տրամադ-
րութեանց մէջ չկայ : Պէտք է յարել
թէ 61րդ. յօդուածին անդործադ-
րութեան պատճառը միայն ստակի
պակսութիւնը չէ. Արաքիւնդի և Պա-
յաղիտի Հայոց աղէտը քաղաքակրթ-
եալ աշխարհի ուշադրութիւնն ըստ
արժանւոյն չգրուեց, և մեր Եգիպտոյ
թղթակիցը կըսէր թէ անոնց դադ-
թականութեան թշուառ բեկորները
մինչև հոն հասեր են

Աֆղանստանայ պատերազմն, որ Անդ-
ղիացւոց նպատաւոր կերպիւ վերջա-
ցաւ, Պարսկական խնդիր մ'ալ երե-
ւան հանած էր : Պարսկաստանի կող-
մէն Անդղիոյ դէմ դժուարութիւններ
յարուցանելու, կամ Անդղիոյ միտող
Աֆղանստանայ Էմիր Պարսկական զօ-
րաց յարձակման մը միջոցաւ պատ-
ժելու համար՝ Ռուսական դիւանա-

դիտութեան թէհրանի մէջ ըրած կամ
ընել կարծուած ջանքերը՝ Ժամանա-
կէ մ'ի վեր Եւրոպական լրագրաց
խորհրդածութեան նիւթ եղած է.
ինչ թէպէտ Աֆղանստանայ պատե-
րազմն այժմ վերջացած լինելով Ռու-
սական դիւանագիտութեան այս ի-
րական կարծեցեալ մեքենայութիւն-
ներն իրենց արժէքին մէջ մեծ մասը
կը կորուսանեն, այսու ամենայնիւ՝
յայտնի է որ Պարսկաստան իւր ար-
դի դրութեան, այսինքն Աֆղանստանայ
և Ռուսիոյ սահմանակից լինելով,
կեդրոնական Ասիոյ մէջ երկու աշ-
խարհակալ պետութեանց՝ Ռուսիոյ և
Անդղիոյ՝ ազդեցութեանցն ենթակայ
պիտի լինի միշտ, հետեւեալ թէհ-
րան՝ Ռուսական և Անդղիական դի-
ւանագիտութեանց համար պատերազ-
մինորդաշտ մը պիտի լինի, եթէ ար-
դէն չէ եղած :

Այս առթիւ Եւրոպական լրագ-
րիքը Պարսկաստանի զինուորական
զօրութեանց վրայ կը խօսին և ըն-
դարձակ տեղեկութիւններ կը հըրա-
տարակեն : Յայտնի է թէ Պարսկ
Շահն՝ անցեալ տարի Եւրոպա ըրած
ուղեորութեան միջոցին՝ Սուրիոյ
կառավարութեան խնդրած էր որ
Պարսկական բանակը վերակազմելու
պաշտօնով քանի մը հմուտ և փորձ
սպայներ զրկուին թէհրան : Այս ըս-
պայք քանի մ'ամիս առաջ թէհրան
հասան և դործի սկսան : Անոնցմէ
մին Գերմանիոյ զինուորական լրագ-
րոյ մը նամակ մ'ուղղած է, յորում
Պարսկական բանակին զօրութիւնն ու
հանգամանքը կը բացատրէ :

Յիշեալ սպային տուած տեղեկու-
թեանց նայելով, Պարսկաստան այ-
ժմ 77 վաշտ հետեւակազոր ունի,
իւրաքանչիւր վաշտ 800էն մինչև 1000
մարդու հաշուով, որով ամբողջ հե-
տեւակազորաց դուռնը 70,000 հոգւոյ
կը հասնի : Հեծեալազօրք 79 վաշտ
են, իւրաքանչիւր վաշտ միջին հաշ-
ւով 400 հոգի պարունակելով, որուն
ամբողջը կը լինի 30,000 հեծեալազօր :
5,000 թնդանօթաձիգ զօրք կայ 200
թնդանօթով. վերջապէս վաշտ մը
ուսահազօրք և ամուրութիւն շինող զօրք,
որ 500 հոգիէ կը բաղկանայ. հետե-
ւաբար՝ Պարսկաստանի կանոնադր
բանակը կը պարունակէ 105,000 զօրք
և սպայ : Պարսկական զօրաց ձեռքը
գտնուած հրացանները բերնէն լըց-
ւող այսինքն հին տեսակէ են, բայց
մօտերս 30,000 հրացան պիտի բեր-
ուի՝ նոր տեսակներէ, և Պարսկական
բանակին համար Աւստրիոյ բանակին
գործածած Իւքաթիոսի թնդանօթ-
ներ ապստըրուած են :

Աւստրիացի սպայն կըսէ թէ Պար-
սիկ հետեւակազորն ընտիր զինուոր
մ'է, որ երկար ճանքոյ կրնայ քա-
լել և ամենատաժանելի աշխատու-
թիւններ կատարել, միանգամայն

սակաւապետ է. հետեւաբար, եթէ
լաւ կրթուի, կրնայ ահարկութեան
մի մը լինիլ : Պարսկական բանակին
հեծեալազօրները քաջ և ճարտար ձի-
աւորներ են, բայց զինուորական
շարժմանց բնաւ վարժ չեն : Հետեւա-
բար, երբ գուցէ մ'ամենապարզաբ-
ժում մը կատարել ուղէ, կարգերը
կը խանգարին, դունդը կատարեալ
խառնակութեան մը մէջ կ'ընայ և
ձիաւորաց խառնաշփոթ ամբոխ մը
կը ձևանայ. թնդանօթները քաջով
ձիերն ալ շատ արագաշարժ են, բայց
թնդանօթաձիգ զօրքը բնաւ կրթու-
թիւն չէ ստացած : Վերջապէս, Ա-
ւստրիացի սպային հետեւութիւնն
այս է թէ Պարսկական բանակն իւր
մէջ մեծ քանակութեամբ կոշտ տա-
րերը կը պարունակէ, որք րաւ կըլ-
թուելով՝ կրնան մեծ զօրութիւն մը
կազմել, թէպէտ այժմ՝ անվարժ և
անփորձ մարդկանց խուժանէ մ'ա-
ւելի բան մը չեն :

Օսմանեան փոխառութեան յաջո-
ղելուն հաւանականութիւններն ան-
ցեալ շաբթուան չափ զօրաւոր չեն :
Միւղիւրիւս փաշան, որ ինք ալ մեծ
քանակութեամբ 1858 թ. փոխառու-
թեան արժեթուղթերն ունի, խնտ-
րայի մէջ բանակցութիւններ բացելու
է ուրիշ արժեթղթատեսարց հետ, յու-
սալով որ Բ. Դրան Օսմանեան Պան-
քային միջոցաւ առաջարկելիք կար-
գադրութեանց աւելի նպատաւոր
կարգադրութիւն մ'ընէր կը յաջողի
ձեռք բերել : Բայց այնքան դժուա-
րութիւնը ծագելու են այս կերպ դոր-
ծել, որ լորտ Սալիպըրի առաջուան
պէս այժմ չուզեր եղեր Անդղիոյ կա-
ռավարութեան կողմանէ տեսուչներ
կարգել՝ առանց Գաղղիոյ ալ տեսուչ-
ներ անուանելուն սպասելուն : Սա-
կայն միւս կողմանէ յայտնի է թէ
Գաղղիա Յունաստանի դատին պաշտ-
պան կանգնած է, և մինչև որ Բ.
Դուռն Հելլենական սահմանաց խն-
դիրը դոհացուցիչ կերպիւ չկարգադ-
րէ, Գաղղիա չուզեր երկտական օգ-
նութիւն մ'ընել թուրքիոյ, թէպէտ
կրկնապէս այնպիսի օգնութիւն մ'ը-
նել երբ Յունաստանի խնդիրը վեր-
նայ մէջ տեղէն :

Այսու ամենայնիւ, բանակցու-
թիւնը կը շարունակեն՝ մանաւանդ
Կ. Պոլսոյ մէջ : Բ. Դուռն փոխառու-
թեան պայմաններէն մէկ քանին չըն-
դունիլ, մանաւորապէս այն պայ-
մանը թէ նոր փոխառութեան 21/2
միլիոն ոսկւոյ դուռն մը թղթագը-
րամին չըջաբերութեան վերցուելուն
և դրամնոյ միացման պիտի յատկանայ :
Բ. Դուռն փոխ առնուելիք դրամա-
դըլթին մէկ մասը՝ թղթագրամը չըր-
ջաբերութեան վերցնելու դործածել
չուզեր եղեր, առարկելով թէ թղթ-
թագրամը դրամ լինելէ դադրած է :

և տրոց մէկ մասին փոխարէն ժողովրդին ձեռքէն առնուելովն և անմիջապէս ոչնչացուելովն արդէն վերանայու վրայ է: Բ. Գրան այս առարկային վերաբերող միջոցները միջոցաւ մ'իրաւացի կը թուի, մանաւանդ այս պատճառաւ որ իրեն մեծ գումարներ պէտք են այժմ զինուոյ ներքեւ գտնուող զօրքերն իրենց հայրենիքը զրկելու, նոր ոստիկանութիւն (ժամատարման) և նոր դատարաններ հաստատուելու, պաշտօնատարաց անվճար մնացած ամուսնաները վճարել և օգտակար ձեռնարկներ և բարենորոգումներ կատարելու համար: Բայց պէտք է մտնել թէ փոխառութիւնը միշտ այսպիսի բարի նպատակներով կ'ընթացած են, և թէ՛ պէտք փոխառութեան ճանքով թուրքի մինչև յարդ 200 միլիոն անգղիական ոսկիէ աւելի գումար մը ձեռք բերած է, այսու աւանդելու խիստ փոքր մասը դործածւած է յօգուտ երկրին: Միւս կողմանէ, եթէ ոչ թղթագրամի բարձումը, գէթ արգիւյս պաշտան գրամաց միտնուելովն անտեսական և քաղաքական տեսակէտներով մեծ օգուտ ունի, և եթէ Բ. Գումար փոխառութեան մէկ մասն այս բարենորոգման յատկացնէ և դրամները միանան, ամեն մարդ վստահ կ'ըլլի թէ փոխառութեան այս մասն յօգուտ երկրին դործածուած պիտի լինի: Տընտեսական տեսակէտով, գրամաց միտնուելուն այս օգուտն ունի որ կայսերական գանձն անմաքուր դրամ դործածելով ըրած միանանքէն կազմաւորուի: ասկէջ դատ, բարոյագէտ ուշագրութեան արժանի կէտ մ'ալ այս է որ Օսմանեան գրամաց արգիւյս չիթով միմիայն պատճառաւ շարունակ խաղաղութիւնը կը լինի ի վերնա ժողովրդեան և նոյն իսկ տէրութեան գանձուելու յուսարի է որ եթէ փոխառութիւնն յաջողի, այս կարեւոր կէտին ալ Բ. Գրան կարմանէ արժան և զամ ուշագրութիւնը կընծայուի:

ՀԵՌԱՊԱՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ
Այս առարկայ հասած հետաքննող
Լոնտոն 14 մայիս.
Փայտեղ լրագիրը կը ծանուցանէ թէ Արեւելեան Ռուսիոյ Պաշտօնը ուղերձ մը կը պատրաստեն առ Ռուսաց կայսրն՝ շնորհակալութիւն յայտնելու համար Ռուսիոյ ըրած զօգուտներէն ինչն, յոյս յայտնելով որ Զարը Պաշտօնը վերածնունդ առնուի ամբողջացնել և յայտարարելով թէ դաշնագրութիւնները պիտի յարգեն:
Գերմանիոյ կայսրուհին այսօր Լոնտոն հասաւ:
Կալիպթա 14 մայիս.
Հնդկաստանի Փոռնաճ քաղաքին մէջ մեծ հրդեհ մը ծագելով քանի մը հասարակայնի շէնքեր այրեցան: Կը կարծուի թէ շարակաւութեան արդիւնք է:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՄԵՆԱՍ ԶԵՐԱՉ
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱ
Կոստանդնուպոլիս Արամեան տպագրութիւն 1979 Ներսէ 46 վերատպանածաւ:
(Երանանդանութիւն և վերջ ԳԵՆ 2315)
Գանք Հայ պատուիրակութեան, այսինքն խրիմեան Արքեպիսկոպոսի և Զերազ Եփէնտիի խաղաղ մէջ ըրածին պատմութեանը: Չեմ անդիտանար որ ի մասինս մեր հեղինակը կերպ կերպ քննադատութեանց և ամբաստանութեանց ենթարկուեցաւ: ոչ ասկաւք իրեն ճշդ և գրութիւնը պարագայիցին, և մինչև իսկ (եթէ լսածս տուող է), արդարեւ իշխանութեան կողմէն իւր տեսակին ցրուելուն արգելք դրուեցաւ: Ի-

Ինքնագրով 14 մայիս.
Ռուսիոյ Ռաշտրքազարին մէջ արքայական հրդեհ մը ծագելով քաղաքին մէկ մասն այրեցաւ:
Կ. Պոլսոյ Գաղղիական դեղատոմսի ֆոնդին մայիս 23ին Կ. Պոլսոյ պիտի վերադառնայ:
Լոնտոն 14 մայիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ աշտատական կուսակցութեան Պ. Տէլլին առաջարկութիւն մ'ըրած էր յանդիմանելով նախարարութիւնը թէ գահուն արտօնութիւնները շարաշար կը դործածէ: Երեսփոխանաց ժողովն ալ այս առաջարկութեան վրայ անմիջապէս վիճարկուելով իրեն բացուելու որոշած էր: Բայց երբեք տական նախարար Սըր Սթաֆօրտ Նորթփոլ իւր առջի որոշման վերադառնալով յայտարարեց թէ վիճարկութեան յետաձգուելուն կը հաւանի:
Լոնտոն 14 մայիս.
Օտ. Գոն. 41 3/4
Փոս. 1865 45
» 1869 43 7/8
» 1871 47 3/4
» 1872 20 1/2
» 1873 42 5/8
» Եղիպոս 60 1/2
Անգլ. Գոն. 98 13/46
Փարիզ 14 մայիս.
Օտ. Գոն. 11.57 1/2
Փարիզ. Գոն. 50/0 79.82 1/2
» » Նոր 31.65
» » 50/0 113.72 1/2


ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ
Հայասի հեռագիր մը կ'ըսէ թէ Կիպրոս կողմէն կատարելապէս Անգլիոյ վաճառման համար Բ. Գրան և Անգլիական կառավարութեան միջև բանակցութիւնը կը շարունակին: Անգլիական կառավարութիւնը միանգամայն կանխիկ գումար մը պիտի տայ Բ. Գրան կողմէն քանի մը տարուան եկամուտներուն վրայ իրբեւ զեղջ:
Անցեալները ծանուցած էինք թէ կառավարութիւնը մեծ քանակութեամբ չքանութեամբ պղնձ ծախած է Պ. ալ Հիւրի: Նոր անգլիականաց նայելով այս տուտուրը չէ յաջողելու: Կառավարութիւնը կողմէն որ Պ. ալ Հիւրի վաճառուած պղնձի գընդին մէկ մասն երկաթուղիին ընկերութեան պահանջին հաշուի: Իսկ Պ. ալ Հիւրի կողմէն որ իւր վճարելիքը դումարն ու թէ երկաթուղիի հաշուին, այլ 1876 տարւոյն մէջ եղած չորս մանր փոխառութեանց հաշուին անցնի, որոց մէջ ինք ալ մեծ բաժին մ'ունի: Բայց կերեւի թէ կառավարութիւնը դրամի անմիջական պէտք չունենալով, այս պայմանը չէ ընդունում և բանակցութիւնները խզած է:
Հասարակայնի շինութեանց նախարարութիւնն ասկէ առաջ ծանուցած էր թէ Հայտար փաշայի երկաթուղին բանեցնելու դործն ընկերութեան մը պիտի յանձնուի:
Կըսուի թէ քանի մը գրամատներ

ընեն գէժ եղանակներ ըսին: «Եթէ իւր պատուիրակութեան քարտուղար կը խօսի, շատ անձնական և անպիտան պարագայներու մէջ կը մտնայ: Իսկ եթէ իւր ընկերութեան մը, շատ պաշտօնական ծանօթութիւններ կը հըրապարակէ:» Իսկ հեղինակն ուղած էր կանխաւ այդ տուարկութեան առաջն առնուլ և կը գրէր (յերես 6). «Չեմ գրեր զայն իւր քարտուղար միայն, այլ նաեւ իւր Հայ ուղեւոր կը պատմեմ ուղեւորութիւնը, ոչ աղբիւրի գաւառի տեսակետով միայն, այլ նաեւ աղբիւրի տեսակետով: Այդ երկու կերպ տեսութեանց մէջ ո՛վ է որ իրաւունք ունի: Հեղինակը թէ իւր քննադատներն: Պ. Մ. Չերապ ուղեր է «հակառակաց միտքներ» գրութեան հեռուելով ի մի խառնել ուղեւորն ու քարտուղարն և երկուսն ալ տարբեր

յիշեալ նախարարութեան գիմելով պայմաններն իմացել են, բայց ոչ ոք առաջարկութիւն մ'ըրբն է դործն իւր վրայ առնուլ, որովհետեւ առանց կառավարութեան կողմէն նպատակ մը տրուելու, յիշեալ երկաթուղին չի կարողանալ իր շահը չսպասուելու եղեր:
Արքունի թնդանութեան մէջ ժամանակէ մ'ի վեր 5 փարանոց պղնձ գրամ կը կոխուի շարաւթն 30,000 հատ:
Կ. Պոլսոյ քաղաքապետութեան կողմէ հրատարակեալ պաշտօնական աղբիւր կը ծանուցանէ թէ պղնձ գրամին անկման պատճառաւ հաշին օգնան 5 փարա վրայ գրած է հեռուաւոր այսօրուէն սկսեալ տվորական հաշիւ փոխանակ 90 փարայի 93ին պիտի վաճառուի:
Անցեալները ծանուցեցինք թէ Շիրքէթի-Խայրէթի շողենաւոց գիւնդուն չափաւորման համար ժողովրդեան կողմէ Բ. Գրան տրուած աղբիւրները նկատուելութեան առնուելով, Լիպի, Մէսաքըրի և այլ շողենաւական ընկերութեանց անօրէններէն բաղկացեալ յանձնախորհուրդ մը կազմուած էր, որպէս զի Շիրքէթի-Խայրէթի եկամուտն ու ծախքը քննարկելու օրինաւոր սակաւքին մ'որոշեն: Միանգամայն աղբաւոր կամ անկարող ուղեւորաց գիւրութեան համար, մինչև ինոր տնօրէնութիւն, երբ շողենաւ սահմանւած էր կէս ոսկիով:
Սոյն տնօրէնութեան հասկառակ, Շիրքէթի շողենաւներուն մէջ դարձեալ անկարողութիւնը շարունակելով և շատեր ալ ընաւ ասակ վճարել չուզելով, կիմանա՞ր թէ Բ. Գրանն բացարձակ հրաման դնացեր է ոստիկանութեան, որ անկարողութեան պատճառաւ կամ հեղինակը կողմ և ստակ վրձարել չուզողները ձերբակալուելով պատժուի ենթարկին:
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԷՍԶԱՄԱՐՈՒՄՈՒՄԻԷ
Կրկն իրիկուն ցուցուցաւ 42.44
Այս առաւոտ ցուցուցաւ 42.45
Կէս օրին 42.44
Բուսիլի երկաթուղի 42.30
Թղթագրամ 930
ԵՆԹԱՅԵ ԳՐԱՄՈՅՑ
3 Մայիս
Անգլ. Գ. իւր 409 34
Նորալին օսկի 87 35
Խմելու խաղ 90 2
Գրքով 51 40
Մէտրիկի տարբերութիւն 6 35
Հինգ 45
Պղնձ 160


Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.
Ըստ որոշման խառն ժողովոյ Պատրիարքական փոխանորդ իղմիրութիւններն ի մի գումարուել: Ինձ այնպէս կերպայ թէ զուարճալին օգտակարին հետ միարանելու ձեռն այս չէ: ապա թէ ոչ, պիտի հարցնեմ թէ ինչո՞ւ հեղինակը չէ ուղած սոյն տեսարակին մէջ խառնել իւր ուրիշ տղաւորութիւններն ալ: «Եւրոպայ, կըսէ, ներքինացի զիս նաեւ իւր մարդ իւր քերթով, այլ գործս անձնական տղաւորութիւններ են, որովք պիտի ձեռնայ մի ուրիշ հատոր»: Ահա միշտ բաժանման կերպ մը: անձնական տղաւորութիւնները զատուլ սակայն անձնականին դիմաբաժանեալը պաշտօնականն է: Իսկ ուղեւորի տղաւորութիւնը անձնական են, և հարկ էր զայն պահել այն հատորին որ Մ. Չերապ մարդուն և Մ. Չերապ քերթովն տղաւորութիւնները մեղ պիտի հարցուէ: Պ. Մ. Չերապ ուղեր էր ի վրասնան կանխել հեռուելով

լեան Գեր. Մատթէոս Սրբազանի պաշտօնին վերաբերեալ պաշտօնազրկին ցարդ յապաղելուն համար՝ Գառաւորական խորհրդոյ նախագահ խորտակման Գեր. Պողոս վարդապետն ու Գալիու քահանայի Արքայապետ Եփէնտին երէկ Բ. Գումարը քննադատելու նախարար վսեմ: Մայիս փաշային ներկայանալու բայց նախարարաց արտաքոյ կարդի ժողով գումարուած լինելուն պատճառաւ չեն կրցել տեսնել և Մեծ-Եպարքոսի խորհրդականին դիմել են, որ ըսեր է թէ յիշեալ գերը դեռ նախարարաց խորհրդէն ելած չէ:
Բերկայէն ապրիլ 19 թուով եկած գրութիւնէ մը կիմանա՞ր թէ թուականէն շարաւթ մ'առաջ Ռ. ընկերութեան տարիկաւը Մարաշ փոխադրուել են և թէ կայսերական քննիչ յանձնախմբին անդամներն ալ ապրիլ 18ին Մարաշ երթալու համար ճանքայ ելել են:
Նոյնպէս Սոյն Մ. Կաթողիկոսն ալ ապրիլ 19ին ճանքայ ելել է Մարաշ երթալու համար:
Իսկ Ռ. ընկերական խորհրդին քննութեան յատկացեալ Անգլիացի պաշտօնատարն ապրիլ 19ին Պէտէճիկ գընացեր է, ուստի ալ 4-5 օրէն Մարաշ պիտի ժամանէ:
Մարաշի առաջին Հայ գերդաստաններէն Մուրատեան Թարութիւն Եփէնտին՝ որ փարիզի մէջ ուսում առած ագիւս երկրասարդ մ'է, յիշեալ Անգլիացի պաշտօնատարին իւր թարգման պիտի ընկերանայ:
Ընթերցողը կը յիշեն թէ՛ Ռուսաստանի բարեհաճաւ Հայ վաճառական Մեծ Սանատարեան անցեալ տարի վստայ Սանդիտեան ընկերութեան 100 Օսմ ոսկի նուիրած, և ընկերութիւնն ալ յանուն նուիրատուին անշարժ կարուած մը գնել ուրոշած էր:
Սակայն յիշեալ գումարը չբաւելով, Տնտեսական խորհուրդը Մեծ Սանատարեանի դիմել է, որ գոհուլութեամբ կը ըսէ՝ այս անգամ հարկը լուսնի և ու նուիրել է իւր աղբօգուտ նպատակին գործադրութեան համար:
Սրբատաղայն երէկ Պատրիարքական հասած հեռագիր մը նշանաւոր Միհր Սըլէյման գանդաւորով կը խնդրէր որ այդ վաճառուոր անձը Սրբատաղայն հեռացուի, ըստ որում իւր 40 ընկերներով 4 ամսուան մէջ 4 հոգի սպաններ և 40 հոգի ալ վերաւորել է:
Տիգրանակերտէն երէկ Պատրիարքարան հասած հեռագիր մ'ալ Սըր-



ԱՆՆՈՂՆԱՐԱՆ ԿԱՄ ՄԱՆՃԱՆԱՆ

Աղին և հասարակ քարեօրաններ
երկաթե և արդյուն, ածան գինեղով
կը ծախուի, և Պոլիս Ղալաթիա Մի-
նասեան և ընկերաց Ամերիկայի մա-
ղաղան :



ԱՐԴՈՒԿ

Այս ձև իւթիւններուն ամենէն ա-
ղէկ տեսակը որուն մէջ կրակը չը մա-
րեր և աղէկ կը գործէ, կը ծախուի
և Պոլիս Ղալաթիա Մինասեան և ըն-
կերաց Ամերիկայի մաղաղան :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄՏՈՄՄՈՂՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ԲԵՆԻՍԵԻ

(Մայրենի ոճ)

ՄԱՍՆ Ա.

Դիտողութեան էրաց և էական

Օրինակը և նիւթը բերանացի և դրա-
ւոր հրահանգաց ցէն 8 տարեկան
տղայաց համար .

Թ. Թեթեան

Իւր տեսակին մէջ նոր բաց խիստ
կարեւոր գործ մ'է, որով մեծարգոյ
հեղինակը մեր ազգային վարժարանաց
մէջ մեծ պիտոյքը լցուցած է : Ինչ-
պէս անունն ալ կը յայտնէ, տղայոց
միտքը խորհրդածութեան վարժե-
ցընելու նպատակաւ շինուած գիրք
մ'է, զոր մեր ազգային դաստիարա-
կաց ուղղութեան կը ներկայեմք :
Գործը 5 մասէ կը բաղկանայ, որք
հետզհետէ պիտի հրատարակին :

Իր գտնուի ամեն Հայ դրամա-
նաց քով և Բերա Մ. Վէյսի և Մ.
Պօտէնի գրատունները Գին 1 Ֆրանք :

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԼԵՁՈՒ

Հայերէն աշխարհագրաւ լեզուն
վերանորոգելու, այսինքն ամենապարզ
միջոցներով իրենց կամ սկզբնական
վիճակի վերածելու արտաւոյ գաղա-
փարին պայտապանութեան նպատակաւ
ասկէջ քանի մը տարի առաջ լրացրաց
ոմանց մէջ Պաշտ և Մաշտ ծիծաղելի
մակագրով հրատարակեալ քանի մը
նամակաց հաւաքածոյ մ'է, 34 էրե-
սէ բաղկացեալ :

Ամեն Հայ գրագիտաց քով կը
գտնուի : Գին 3 1/2 զը մէճլիտ :

ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐՈՐԴ

Գ. Վ. Սրահանյան

Մասն Առաջին

Կը վաճառուի Վ. Յ. Մարգարեան
գրատունը Մէրճան թիւ 37 և Ենի-
ճամիի վաղոյ Ս. Ղուկասեանի խա-
նութը և ամեն Հայ գրատունաց
քով : Գին կէս արծաթ Մէճլիտ :

ԻՄԲԱԳԻՐ—ՏՆՈՐԷՆ

Կ. Ս. Ինժեռիճեան



ՇԻՐԱԲԵՐԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՐԵՆԱԽՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՍՊՐԻԼ 4 ՁՈՐԵԲԵՐՈՒ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆԵՆԻ ԱՊՐԻԼ 30

ԲՈՍՖՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՐԵՆԱԽՆԵՐԸ

Ժամ Երեւոյն Երեւոյն Թիւ

11 30	Ենիմահալէն Մէջարու. Պէյրէքտէն, Թարապիւ, 32
12 30	Ենիմահալէն Մէջարու. Պէյրէքտէն, Թարապիւ, 20
1 45	Ենիմահալէն Մէջարու. Պէյրէքտէն, Թարապիւ, 18
3	Մէջարու. Պէյրէքտէն, Թարապիւ, 32
4 15	Ենիմահալէն Մէջարու. Պէյրէքտէն, Թարապիւ, 28
5 15	Ենիմահալէն Մէջարու. Պէյրէքտէն, Թարապիւ, 28
6 15	Ենիմահալէն Մէջարու. Պէյրէքտէն, Թարապիւ, 4
8	Ենիմահալէն Մէջարու. Պէյրէքտէն, Թարապիւ, 20
10	Ենիմահալէն Մէջարու. Պէյրէքտէն, Թարապիւ, 22

Արեւելոյ Երեւոյն

11 45	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 28
12 15	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 23
12 30	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 22
1 20	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 28
2	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 23
3	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 17
10 15	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 19
11	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 28

Արեւելոյ Երեւոյն

11 45	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 19
12 15	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 4
12 15	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 17

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի
բաց ի կերակի և տօն օրերէ :

Բաժանորդագրութեան տեղն է Ղա-
լաթիա Սանտրոնիսի ճամբան թիւ
198, Նորո խան Մասիսի խաղաղատու-
նը : Իսկ գաւառաց մէջ հեռագրաւ հոգա-
բարձուաց դրամներէն կը լինի :

ՁՄԻՌՈՒՆԻԱ. Ստեփան Է. Տէմէեան.
Նիկոմիտի. Խորոյ » Եսկիճեան.
ՊՐՈՒՍՍ. Ստեփան Է. Տէմէեան.
ԲՈՏՈՍՈՒ. Ստեփ. Տ. Արիտակէտ ա-
ւագ քահանայ Տէմէեան.
ԱՐԴԻԱՆՈՒՊՈՒՍ.
ԱՄՍՈՒՆ.
ՏՐԱՊԵՏՈՒ. Ս. Եմէեան Է. Տէմէեան.
ԱՄՍՈՒՍ.
ՍԵՐԱՍՏԻԱ. Նաղարէթ Է. Տ. Իս-
թամարեանց.
ԵԻՂՈՒՆ.
ԲԱՐԵՐԻ և ՏԵՐԱՍԻ. Կերակու Է. Տ.
Ս. Ղաղանճեան.
ԵՐԶՆԱ. Թաղէտ Է. Տ. Բաղրատունի.
ԿՈՐԻՆ. Կարապետ » Ջաղարեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ » Փօթիկեան.
ՎԱՆ.
ԲԵՐԻԱ. Սեդրակ » Թարաճեան.
ՏԻՂԱՆԱԿԵՐՏ. Թովմա Է. Տ. Թաղ-
ճեան.
ԵՂԵՍԻԱ. Գեորգ Է. Տ. Ոսկերչեան.
ՄԱՐԱՇ.
ՅՈՒՐԵՆ. Յէրհատ աղա Ս. Յէրհատ-
եան.
ՏՓԻՍ. Պ. Նիկողոսյոյ Տ. Ղ. Եսկիճեան.
ԿԱԼԱՍԱ. Պաշտ աղա Է. Տէմէեան.

Բաղա. Գան. Ա. Հիսար, Գան. Վանի. Զենի.

3	Պէյրէքտէն. Պէյրէքտէն, Բաղա. Գան. Ա. Հիսար, Գան. 34
8 45	Պէյրէքտէն. Պէյրէքտէն, Բաղա. Գան. Ա. Հիսար, 23
	Գան. Վանի. Զենի. Պէյրէքտէն, Գան. Իսկ.

ԿԱՄՈՒՐԵՆ ԵՆՆՈՂ ՇՈՐԵՆԱԽՆԵՐԸ

Ժամ Երեւոյն Երեւոյն Թիւ

1 15	Գան. Իսկ. Պէյրէքտէն. Պէյրէքտէն, Բաղա. Զենի. Ար. 4
	Գան. Ա. և Ր. Հիսար, Գան. Եսկիճեան, Ենիմահալ.
1 30	Պէյրէքտէն. Պէյրէքտէն, Բաղա. Զենի. Ենիմահալ. 32
2 30	Պէյրէքտէն. Պէյրէքտէն, Բաղա. Զենի. Ենիմահալ. 28
5	Գան. Պէյրէքտէն. Պէյրէքտէն, Բաղա. Զենի. Ենիմահալ. 20
6 30	Իսկ. Պէյրէքտէն. Պէյրէքտէն, Բաղա. Զենի. Ար. 23
8	Պէյրէքտէն. Պէյրէքտէն, Բաղա. Զենի. Ենիմահալ. 22
10	Ար. Պէյրէքտէն, Բաղա. Զենի. Ենիմահալ. 32
10 40	Պէյրէքտէն. Պէյրէքտէն, Բաղա. Զենի. Ենիմահալ. 18
11 15	Պէյրէքտէն, Բաղա. Զենի. Ենիմահալ. 20

Արեւելոյ Երեւոյն

12 15	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 28
1 30	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 23
2 30	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 17
9 30	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 19
10 15	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 28
11 15	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 23
11 40	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 28
12	Արեւելոյ Երեւոյն. Պէյրէքտէն, 4

Արեւելոյ Երեւոյն

2 30	Իսկ. Գան. Պէյրէքտէն. Զենի. Վանի. Գան. Ա. Հիսար, 19
9 45	Գան. Բաղա. Պէյրէքտէն. Զենի. Վանի. Գան. Ա. Հիսար, 17
10 30	Գան. Բաղա. Պէյրէքտէն. Զենի. Վանի. Գան. Ա. Հիսար, 34
11 15	Գան. Բաղա. Պէյրէքտէն. Զենի. Վանի. Գան. Ա. Հիսար, 19
11 40	Գան. Բաղա. Պէյրէքտէն. Զենի. Վանի. Գան. Ա. Հիսար, 22

ԻՍԿԻՆՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՐԵՆԱԽՆԵՐԸ

Ժամ Երեւոյն Երեւոյն Թիւ

12	6 30	12 15	7
12 30	7	12 45	8
1	8	1 10	8 30
1 25	8 30	1 40	9
1 45	9	2 10	9 30
2 20	9 30	2 40	9 50
2 45	10	3	10 10
3 10	10 20	3 30	10 40
3 50	10 40	4	11
4 15	11	4 30	11 20
4 40	11 20	5 5 Պէյրէքտէն.	11 35
5 25	11 40	5 45	11 50
6	12	6 30	12 5

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Ժամ Երեւոյն Երեւոյն Թիւ

12	6	12	6
12 30	6 35	12 30	6 25
1	8	1	8
1 30	8 40	1 30	8 45
2	9 20	2	9 20
2 30	10	2 30	9 20
3 5	10 30	3 5	10
3 45	11	3 45	10 30
4 30	11 30	4 30	11 5
5	12	5	11 35
5 25		5 25 Պէյրէքտէն.	12 5